ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2

ք. Երևան «07» հոկտեմբեր 2025թ.

«Ջրային կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շինմաստեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Բաղալյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ամբարտակների ամրացման աշխատանքներ - ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Խնկոյան բնակավայրի պոմպակայանի ՕԿՋ-ի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն նախագծի՝ 4.8 ամիս:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1) հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանգրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,

2) շինարարական աշխատանքների կատարումն ուսնհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկաական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 **Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:**

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման

(շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5-րդ չափաբաժին 159,720,000 (մեկ հարյուր հիսունիննը միլիոն յոթ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, որից 26,620,000 (քսանվեց միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15–ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական օբյեկտի նախապատրաստումը չի նախատեսել ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազննին ծանոթություն, արտահրապարակային ու ներհրապարակային նախապատրաստական աշխատանքներ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2	Չի կանխվել վերգետնյա և/կամ ստորգետնյա ջրային ռեսուրսների աղտոտումը շինարարական աղբից, չվարակազերծված ջրերից, նավթամթերքներից, քիմիկատներից	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով
3	Վտանգավոր տեղամասը չի ցանկապատվել (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային սարքերի, սարքավորումների, գովազդային վահանակների կիրառմամբ)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագրի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
7	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
9	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

10	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
11	Շինարարական աշխատանքների ընթացքում չի լրացվել աշխատանքների վարման մատյանը, չի կազմվել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտերը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
12	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
13	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
14	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
15	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
16	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 2.1, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	«Շինմաստեր» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	ք. Երևան, Երզնկյան 22շ., բն. 26
Հ/Հ 900011039899	Ակբա բանկ ԲԲԸ
ՀՎՀՀ 02555816	Հ/Հ 220553331582000
Կոմիտեի գլխավոր քարտուղար	ՀՎՀՀ 08417768
	էլ. հասցե՝ office@shinmaster.am
_____ Ա. ԴԱՀԱՐՅԱՆ	Տնօրեն _____Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ.Տ

«07» հոկտեմբեր

Հավելված թիվ 1
2025թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԱՄԲԱՐՏԱԿՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԿՈՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՕԿՋ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՁԱՓԱԲԱԺԻՆ 5

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	3	4	5	6	7
	1. Ջրավազան				
	1. Քանդման աշխատանքներ				
1	ՕԿՋ-ի շեպերի և հատակի մաքրում բուսականությունից, հմիջ = 60սմ հաստությամբ տիղմից և նստվածքներից 1.0մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով	մ³	6600.0	0.53	3501.79
2	Բուսական աղբի բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 29կմ հեռավորությամբ թափոնավայր	տ	10560.0	7.39	78002.82
3	ՕԿՋ-ի արևելյան շեպի բետոնե երեսարկի և խորքային հարթ փականի բետոնե եզրապատերի քանդում մեխանիզմով	մ³	125.0	1.15	143.62
4	ՕԿՋ-ի մնացած շեպերի քայքայված հատվածների բետոնե երեսարկի քանդում (30%) 5-10սմ հաստությամբ՝ հետհար մուրճով	մ³	46.0	33.18	1526.43
5	Ե/բ 1000մմ-ոց կլոր օղակների ապամոնտաժում, - 10հատ-9տ հանձնում շահագործող կազմակերպությանը	մ³	5.0	11.77	58.84
6	Գույություն ունեցող խորքային ГС 160-250բ հարթ փականի ապամոնտաժում, հանձնում շահագործող կազմակերպությանը	տ	0.710	288.76	205.02
7	Քայքայված ե/բ ЛР-4 վաքերի ապամոնտաժում	մ³	1.29	14.78	19.07
8	Շինարարական աղբի բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում թափոնավայր մինչև 29կմ	տ	306.0	8.11	2480.21
	2. Հողային աշխատանքներ				
1	Գրունտի կտրում II կարգի բնահողերում բուլդոզերով, տեղափոխելով մինչև 50մ	մ³	250.0	0.69	173.27
2	Փոսորակի փորում ՕԿՋ-ի արևելյան շեպի IV կարգի բնահողերում էքսկավատորով, կողալիցքով	մ³	1700.0	0.73	1248.55
3	Հետլիցքի իրականացում հենապատի եզրագծով հանված օգտակար գրունտից՝ մեխանիզմով և տոփանումով	մ³	200.00	0.41	82.40

4	Լիրքի իրականացում հենապատի հետնամասում հանված օգտակար գրունտից մեխանիզմով, 30սմ շերտով խտացում 6տ-ոց գլդոնով՝ երկու անցում մեկ հետքի վրայով	մ³	600.00	0.75	447.36
5	Ավելացած գրունտի փռում և հարթեցում ջրավազանի հատակում բուլդոզերով, տոփանում պնևմոգլդոնով	մ³	1150.00	0.41	473.82
	3. Բետոնային աշխատանքներ				
	Հենապատի իրականացում	-	-		
1	Միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	463.00	96.73	44786.82
2	Նախաշերտ B7,5 դասի բետոնից	մ³	21.00	41.78	877.48
3	Խճով փոփանված գրունտ հենապատի հիմքում	մ³	23.00	2.93	67.43
	Մուտքի և սպասարկման հարթակի իրականացում	-	-		
1	Միաձույլ բետոն B15, F150, W4 դասի	մ³	136.00	81.94	11143.33
2	Ավազակոպճային նախաշերտ տոփանումով	մ³	45.00	11.28	507.49
	Շեպերի երեսակ	-	-		
1	Խոռոչների փակում B15 դասի բետոնեվ	մ³	30.0	49.86	1495.66
2	Խրամուղու շեպերի և հենարանների բետոնե հիմքերի արտաքին մակերեսի փոշու և բետոնի մնացորդների հեռացում օդամղիչով, թրջում կոնտակտային սոսնձով	մ²	2213.0	1.22	2707.04
3	Անցքերի գայլիկոնուն Φ12մմ, h=10սմ	տեղ	3923	0.54	2124.94
4	Կցաձողերի տեղադրում Φ10 AIII, L=24սմ	կգ	581.0	1.44	837.68
5	Ամրանացանց Φ5Br-I, քայլը 150x150	մ²	2324.0	1.82	4225.03
6	Միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	340.0	96.73	32888.81
	Մեկուսացման աշխատանքներ	-	-		
1	Հորիզոնական ջերմային կար №1 շեպերի վրա	մ	455.0	1.96	892.78
2	Հորիզոնական ջերմային կար №1* շահագործման հարթակի վրա	մ	167.0	2.17	362.04
3	Հորիզոնական ջերմային կար №3 հենապատում	հատ	15	21.02	315.32
4	Գրունտի հետ միաձույլ բետոնե հենապատի շփման մակերևույթի հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մածիկով	մ²	495.00	1.41	699.07
	Ընդամենը				192294.1
	2. Մոտեցնող ջրանցք, ջրընդունիչ ավազան և սնող խողովակաշար				
	Հողային աշխատանքներ	-	-		
1	Խրամուղու հանույթ IV կարգի բնահողերում էքսկավատորով, կողալիցքով	մ³	38.0	0.73	27.91
2	Խրամուղու լրամշակում ձեռքով	մ³	2.0	5.46	10.92
3	Հետլիցք հանված գրունտներից	մ³	29.00	0.08	2.27
4	Ավելցուկային գրունտի հարթեցում և տոփանում ջրավազանի հատակում	մ³	11.0	1.17	12.85
	Բետոնային աշխատանքներ	-	-		
1	Ավազակոպճային նախաշերտ տոփանումով	մ³	1.40	11.28	15.79
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	6.30	96.73	609.41

3	Հատակի միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	1.80	81.94	147.49
	Մետաղական կոնստրուկցիաներ և խողովակներ	-	-		
1	Հարթ փական 'ПС'40x40x120 -2 հատ	տ	0.106	1486.96	157.62
2	Պողպատե եռակցվող խողովակների մոնտաժում DN 325x5մմ, փորձարկումով	մ	18.0	44.88	807.93
3	Պողպատե խողովակի ձևավոր մասեր	կգ	43.900	2.28	100.05
	Մեկուսացման աշխատանքներ	-	-		
1	Գրունտի հետ միաձույլ բետոնե պատերի շփման մակերևույթի հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մածիկով	մ²	25.00	1.41	35.31
2	Պողպատե խողովակների հակակոռոզիոն հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	մ²	18.4	1.84	33.94
3	Հարթ փականների մետաղական մակերևույթի ներկում ջրակայուն յուղանեկով	մ²	1.6	1.00	1.60
4	Հորիզոնական ջերմային կար №1	մ	2.0	2.11	4.22
5	Ուղղաձիգ ջերմային կար №2	մ	4.0	1.74	6.95
	Ընդամենը				1974.2
	3. Վթարային ջրհեռ				
	Հողային աշխատանքներ	-	-		
1	Խրամուղու հանույթ IV կարգի բնահողերում էքսկավատորով, կողալիցքով	մ³	60.0	0.73	44.07
2	Խրամուղու լրամշակում ձեռքով	մ³	5.0	5.46	27.29
3	Հետլիցք հանված գրունտներից	մ³	40.00	0.08	3.14
4	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ³	25.0	1.17	29.19
5	Քարե շարվածք ջրհեռ հանգույցում	մ³	1.5	6.45	9.68
	Բետոնային աշխատանքներ	-	-		
1	Բետոնի նախաշերտ B7,5 դասի	մ³	5.50	41.78	229.82
2	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	16.50	96.73	1596.07
3	Հատակի միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	6.20	81.94	508.00
	Մեկուսացման աշխատանքներ	-	-		
1	Գրունտի հետ միաձույլ բետոնե պատերի շփման մակերևույթի հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մածիկով	մ²	50.00	1.41	70.61
2	Հորիզոնական ջերմային կար №1	մ	7.0	2.09	14.62
3	Ուղղաձիգ ջերմային կար №2	մ	11.2	1.74	19.45
	Ընդամենը				2552.0
	4. Հատակային ջրթող				
	Հողային աշխատանքներ	-	-		
1	Խրամուղու հանույթ IV կարգի բնահողերում էքսկավատորով, կողալիցքով	մ³	97.0	0.73	71.24
2	Նախաշերտի իրականացում մշակված գրունտներից տոփանումով	մ³	3.0	1.17	3.50
3	Խրամուղու հետլիցք տեղի մշակված գրունտից տոփանումով	մ³	78.0	0.48	37.30

4	Ավելցուկային գրունտի հարթեցում և տոփանում ջրավազանի հատակում	մ³	22.0	1.17	25.69
5	Քարե շարվածք ջրփողի ետնամասում	մ³	5.0	6.45	32.27
	Բետոնային աշխատանքներ	-	-		
1	Պատերի միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	5.50	96.73	532.02
2	Հատակի միաձույլ բետոն B15, F150, W4	մ³	3.20	81.94	262.20
3	Ամրան Φ16 AIII	կգ	10.20	1.22	12.40
	Մետաղական կոնստրուկցիաներ	-	-		
1	Խորքային հարթ փական 'ГС'100-250р	տ	0.290	1486.96	431.22
2	Պատյան խողովակ (St) DN820x7, մոնտաժում, փորձարկումով	մ	20.0	158.50	3170.01
	Մեկուսացման աշխատանքներ	-	-		
1	Հարթ փականների մետաղական մակերևույթի ներկում ջրակայուն յուղանեկով	մ²	9.0	1.00	8.98
2	Պողպատե խողովակների հակակ. հիդրոմեկուսացում բիտումային մածիկով	մ²	52.0	1.84	95.92
3	Գրունտի հետ միաձույլ բետոնե պատերի շփման մակերևույթի հիդրոմեկուսացում բիտումապոլիմերային մածիկով	մ²	19.00	1.41	26.83
4	Հորիզոնական ջերմային կար №1	մ	6.0	2.41	14.43
5	Ուղղաձիգ ջերմային կար №2	մ	3.2	1.74	5.56
	Ընդամենը				4729.6
	5. Պոմպի ներծծման հորի իրականացում ե/բ հավաքովի էլեմենտներից (D=1,0 H=2,7մ)				
	Մոնտաժման աշխատանքներ	-	-		
1	Նախաշերտ B7,5 դասի բետով	մ3	0.20	41.98	8.40
2	Ե/բետոնե կլոր հորի տեղադրում հավաքովի էլեմենտներից D=1,0մ, H=1,8մ	մ3	0.80	56.29	45.03
3	Պատի օղակ КЦД 10-9	հատ	3	38.68	116.04
4	Հիմքի սալի КЦД-10	հատ	1	30.94	30.94
5	Ամրան Φ18 AIII	կգ	16.20	1.22	19.70
	Մետաղական կոնստրուկցիաներ	-	-		
1	Ներդիր դետալ	կգ	16.00	1.33	21.24
2	Աղբորսիչ ճաղավանդակ	կգ	121.4	0.91	110.56
	Մեկուսացման աշխատանքներ	-	-		
1	Մետաղական տարրերի և ներծծման խողովակի յուղաներկում ջրակայուն ներկով	մ²	8.0	1.00	7.98
	Ընդամենը				359.9
	Ընդամենը				201,909.74

	Չնախատեսված ծախսերի մնացած 50% -ի գումարը Պատվիրատուի կողմից Կապալառուին տրամադրվող պահուստային միջոցները ենթակա են վճարման՝ վերջինիս կողմից հիմնավորող փաստաթղթերի (կատարողական ակտերի, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձերի եզրակացությունների առկայության) ներկայացման դեպքում:				2,983.90
	Ընդամենը չնախատեսված ծախսերով				204,893.64
	ԱԱՀ -20%				40,978.73
	Ընդամենը ԱԱՀ-ով				245,872.37

Ծանոթություն՝

Պայմանագրի շրջանակներում, կապալառուի կողմից ներկայացվող կատարողականներում, չնախատեսված աշխատանքների ծախսերը պետք է հաշվարկվեն 50%-ի չափով՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի, մյուս 50%-ը կտրամադրվի նույն որոշմամբ հաստատված կարգով սահմանված:
կառուցվող օբյեկտի կառուցվածքների կամ նրանց առանձին մասերի (այդ թվում սարքավորումների, համակարգերի, ցանցերի և սարքերի) լաբորատոր փորձարկումները և նմուշառումները իրականացնելու է շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն մատուցող ընկերությունը
Նախագծով նախատեսված շինարարությունում կիրառվող բոլոր տեսակի նյութերը և սարքավորումները պետք է լինեն նոր, չօգտագործված

* Կապալառուն աշխատանքները կատարում է Սպիտակ համայնքի Խնկոյան բնակավայրի վարչական տարածք հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011039899
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ՂԱՋԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինմաստեր» ՍՊԸ
ք.Երևան, Երզնկյան 22 շենք բն. 26,
հեռ.098410404
Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 220553331582000
ՀՎՀՀ 08417768
Էլ. հասցե՝ office@shinmaster.am
տնօրեն

----------Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

«07» հոկտեմբեր

Հավելված 1.1
2025թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԱՍՏՈՒՄ

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

«Շինմաստեր» ՍՊԸ- -ն հավաստում է, որ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա* ծածկագրով բաց մրցույթի շրջանակում ընտրված մասնակցի անվանումը մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011039899
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ԴԱՋԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինմաստեր» ՍՊԸ
ք. Երևան, Երզնկյան 22շ., բն. 26
Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 220553331582000
ՀՎՀՀ 08417768
Էլ. հասցե՝ office@shinmaster.am
տնօրեն

----------Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

«02» հոկտեմբեր Հավելված թիվ 2
2025թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԱՄԲԱՐՏԱԿՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ - ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԿՈՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՕԿՋ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
համաձայն նախագծային փաստաթղթերի
Չափաբաժին 5

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը 2025թ.	
		Սկիզբը	Ավարտը համաձայն նախագծի
1	Նախապատրաստական աշխատանքներ		5 օր
2	Ջրավազան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	
2.1	*Ջրավազանի թասի մաքրման, բայբայված կառուցվածքների քանդման, ապամոնտաժման և մաքրման աշխատանքներ*		109 օր
2.3	*Հողային աշխատանքներ*		33 օր
2.4	*Բետոնային աշխատանքներ*		109 օր
4	Մոտեցնող ջրանցք, ջրընդունիչ ավազան և սնող խողովակաշար		5 օր
5	Վթարային ջրհեռ		9 օր
6	Հատակային ջրթող		12 օր
7	Պոմպի ներծծման հորի իրականացում ե/բ հավաքովի էլեմենտներից		10 օր
8	Ժամանակավոր շենք-շինությունների ապամոնտաժում, տարածքի մաքրում և կարգաբերում		5 օր
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՁՓ Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Համաձայն նախագծի Աշխատանքի մանրամասն նկարագրությունը և պայմանները տրված են նախագծային փաստաթղթերում:	
5	ամբարտակների ամրացման աշխատանքներ - ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Խնկոյան բնակավայրի պոմպակայանի ՕԿՋ-ի հիմնանորոգման աշխատանքների	Աշխատանքի մանրամասն նկարագրությունը և պայմանները տրված են նախագծային փաստաթղթերում:	4.8 ամիս ոչ ուշ քան - 15.12.2025թ.

		Անհրաժեշտ է համագործակցել շահագործող կազմակերպության հետ և կազմել աշխատանքների իրականացման գրաֆիկ: **Կապալառուն պետք է ծանոթանա ոռոգման ժամանակաշրջանի հետ, ինչպես նաև չոր և անձրևային սեզոնների օրացույցին նախագծվող շինարարության տեղանքում:** **Կապալառուն պետք է կազմի գրաֆիկ և կատարի աշխատանքները այնպես, որ շինարարական և վերանորոգման աշխատանքները չխանգարեն ոռոգման պրոցեսին:** Կապալարուն պետք է պատրաստի աշխատանքների ծրագիր, հաշվի առնելով այն ժամանակաշրջանները, երբ ոռոգման ջուրը պետք է մատակարարվի պահանջվող հատվածներին: Աշխատանքների այդ գրաֆիկը և միջոցառումները, որոնք կառաջարկի կապալառուն ջրամատակարարման ապահովման համար, պահանջում է ճարտարագետի գրավոր համաձայնությունը:	
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011039899
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինմաստեր» ՍՊԸ
ք. Երևան, Երզնկյան 22շ., բն. 26
Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 220553331582000
ՀՎՀՀ 08417768
էլ. հասցե՝ office@shinmaster.am
տնօրեն

----------Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ
/ստորագրության/
Կ.Տ.

«07» հոկտեմբեր

Հավելված N 2.1
2025թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 ծածկագրով պայմանագրի

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները

Չափաբաժին 5

«Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 30 նոյեմբերի 2023 թվականի N 2106-Ն որոշման N1 հավելվածի համաձայն՝ հիդրոտեխնիկական կառուցվածքների հիմնանորոգման, կառուցման աշխատանքների համար անհրաժեշտ է, որ մասնակիցն ունենա **Շինարարության իրականացման (ծածկագիր՝ 03) լիցենզիա՝**

- **«հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ)» ներդիրով (ներդիրի ծածկագիրը՝ 07)**:

Միաժամանակ, հաշվի առնելով հիմնանորոգման (կառուցման) օբյեկտի բարդությունն ու ռիսկայնությունն՝ անհրաժեշտ է, որ մասնակից կազմակերպությունն ունենա համապատասխան լիցենզիայի առնվազն 1-ին դաս:

Չափաբաժին 5 *ամբարտակների ամրացման աշխատանքներ - ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Խնկոյան բնակավայրի պոմպակայանի ՕԿՋ-ի հիմնանորոգման աշխատանքների*

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները

1.Կառուցվածքների նվազագույն երաշխիքային ժամկետներ՝

1) բետոնի տեղադրում – 20 տարի,
2) Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժ – 40 տարի:

Երաշխիքային ժամկետները իրատեսական են շահագործման կանոնները պահպանելու դեպքում:

2.Օբյեկտի նախատեսված աշխատանքների իրականացման համար կիրառվող նյութերի նվազագույն երաշխիքային ժամկետները՝

1) բետոն – 20-25 տարի,
2) պողպատ – 40 տարի:

3.Օբյեկտի շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության նվազագույն երաշխիքային ժամկետներ՝

1) Մրցույթի հաղթող Կապալառու կազմակերպությունը շինարարության ավարտից հետո շահագործման ընթացքում 1 տարի (առնվազն ոռոգման 1 սեզոն) երաշխիքային ժամկետում պարտավոր է վերացնել շինարարական աշխատանքներում և տեղադրված սարքավորումներում ի հայտ եկած բոլոր թերությունները:

Սարքերի և սարքավորումների ցանկը	
1	Խորքային ГС 100-250р հարթ փական – 1 հատ,
2	Հարթ ПС 40x40x120 տիպի փական – 2 հատ:
Սարքավորումները պետք է լինեն սերտիֆիկացված և ՀՀ տարածքում կիրառելի: Բացի վերոնշյալ սարքավորումները կապալառուն պայտավոր է սերտիֆիկատներ ներկայացնի նաև տեղադրվող բետոնի, օգտագործվող խողովակների, այլ մետաղական կոնստրուկցիաների համար:	
Սարքերի և սարքավորումների ցանկը և երաշխիքային ժամկետները	Սահմանվում է նախագծային փաստաթղթերում և կազմում է մեկ տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011039899
ՀՎՀՀ 02555816
Կոմիտեի գլխավոր քարտուղար

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինմաստեր» ՍՊԸ
ք. Երևան, Երզնկյան 22ա, բն. 26
Ակբա բանկ ԲԲԸ
Հ/Հ 22055333158200
ՀՎՀՀ 08417768
Էլ. հասցե՝ office@shinmaster.am

տնօրեն----------Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ
/ստորագրություն/ Կ.Տ

«07» հոկտեմբեր

Հավելված N 3
2025թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում						
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	45241147/2	ամբարտակների ամրացման աշխատանքներ - ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Խնկոյան բնակավայրի պոմպակայանի ՕԿՋ-ի հիմնանորոգման աշխատանքների	132,567,600	132,567,600	132,567,600	159,720,000	159,720,000	159,720,000	159,720,000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
Հ/Հ 900011039899
ՀՎՀՀ 02555816
scws@scws.am
Կոմիտեի գլխավոր քարտուղար

_____ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինմաստեր» ՍՊԸ
ք.Երևան, Երզնկյան 22 շենք բն. 26,
հեռ.098410404
Հ/Հ 220553331582000
ՀՎՀՀ 08417768
էլ. հասցե՝ office@shinmaster.am
տնօրեն

----------Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

«07» հունվար Հավելված թիվ 4
2025թ. կնքված
ՁԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«08» հոկտեմբեր 2025թ. կնքված
ՔԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 5
«07» հոկտեմբեր 2025թ. կնքված
ՋԿ-ԲՄԱՇՁԲ-25/2-Ա-2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կապալառուի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.